ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ -ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին շրջանում ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սոցիալական մեդիայի իր անձնական էջերում ակտիվ գրառումներ է կատարում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հայ Եկեղեցու բարձարստիճան հոգևորականների վերաբերյալ: Այդ գրառումների բովանդակությունն ուղղված է Հայ Եկեղեցու բարձարաստիճան դասի որոշ ներկայացուցիչների կողմից կուսակրոնության ուխտի խախտումները բացահայտելուն, ըստ եկեղեցական կարգի պատասխանատվության ենթարկելուն և նոր Կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու հարցերին: Ավելին, նշված օրակարգով կազմակերպչական հարցերը կարգավորելու նպատակով՝ Նիկոլ Փաշինյանը նախատեսում է ստեղծել համակարգող խումբ, որի անդամների ընտրությունը պատրաստվում է իրականացնել անձամբ՝ ըստ իր կողմից սահմանված համապատասխանության չափանիշների:

Հայաստանի Հանրապետության առաջին դեմքի՝ ՀՀ Կառավարության ղեկավարի կողմից հայ հոգևոր իշխանության գործիչների նկատմամբ իրականացվող այդ նախաձեռնությունը արտասովոր երևույթ է հայ հասարակության անդամների համար, հատկապես, որ այդ գրառումները պետության ղեկավարը պարբերաբար կատարում է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հայ մարդուն ոչ վայել բառապաշարով:

ՀՀ վարչապետի կողմից շարունակաբար իրականացվող այս արշավը լուրջ քննադատության է արժանացել մի շարք քաղաքական ու հասարակական գործիչների կողմից, իսկ իրավապաշտպան շատ կազմակերպություններ, այդ թվում՝ «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, խստագույնս դատապարտել են ՀՀ վարչապետի որդեգրած մոտեցումներն ու վերաբերմունքը Հայ Եկեղեցու առաջնորդության նկատմամբ:

Սակայն, եթե անգամ պատկերացնենք, որ այդ հարցում ՀՀ վարչապետի մտահոգությունները տեղին են, ապա միանշանակ է, որ դրանց հաստատման կամ հերքման գործընթացները պետք է իրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:Ուստի այս հարցում անհրաժեշտ է հասկանալ, թե **ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի ի՞նչ կանոններով են պարտավոր առաջնորդվել պետությունն ու եկեղեցին միմյանց հետ հարաբերություններում՝ ի դեմս այդ կառույցները ղեկավարող անձանց:**

Բարձրացված հարցի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները փաստումեն, որ պետությունը՝ լինելով քաղաքական իշխանության իրականացման գլխավոր ուժը, բացառիկ և անմրցելի դեր ունի հասարակության քաղաքական համակարգում: Պետությունը քաղաքական համակարգի ամենազանգվածային կազմակերպությունն է, որը միավորելով հասարակության բոլոր անդամներին, հանդիսանում է իր տարածքում բնակվող ժողովրդի ներկայացուցիչը: Այս հանգամանքն իր արտահայտությունն է գտել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: (…) Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Հայաստանի Հանրապետությունում հասարակության հոգևոր ներկայացուցչությունը, որպես մեկ ամբողջական միություն, իրականացնում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որի բարձրագույն հոգևոր առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված): Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները ենթակա են օրենքի կարգավորմանը:

Ըստ այդմ, օրենքով ամրագրված է, որ *Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատված է պետությունից, և միմյանց հետ հարաբերություններում* ***պետությունն ու եկեղեցին փոխադարձաբար կրում են միմյանց կառավարմանն ու գործունեությանը չմիջամտելու պարտավորություն*** *(«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենք 17-րդ հոդված): Միևնույն ժամանակ,* ***Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում*** *(«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված, մաս 2):*

Հայ Եկեղեցու նվիրապետական համակարգը ներկայացնում է հոգևոր սպասավորության ամբողջությունը,որի բարձրագույն աստիճանը հանդիսացողԿաթողիկոսն ընդունվում է որպէս Թադևոս ու Բարդուղիմեոս առաքյալների,ինչպեսնաև Գրիգոր Լուսավորչիհաջորդն ու ժառանգորդը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնը ցմահ է, և Կաթողիկոսին ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովը: Այս մարմնի իրավասությանն է վերապահված նաև Կաթողիկոսիգահընկեցության մասին որոշման ընդունումը (ինչը կարող է իրականացվել բացառապես դավանաբանական շեղումների դեպքում),հոգևոր իշխանության պատասխանատվության հարցերը, միմյանց հետ փոխհարաբերությունների սահմանների ու կարգիորոշումը, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ընթացակարգերի սահմանումը:

Ազգային-եկեղեցական ժողովի այս և մյուս բոլոր իրավասությունները սահմանված են Ազգային-եկեղեցական ժողովի 1945 թվականի Կանոնադրությամբ[1], որում վերջին փոփոխություններն ու լրացումները կատարվել են 2017 թվականի հունիսին գումարված՝ Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովում:

Այս փաստաթղթն, ըստ էության Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր և վարչական կառավարման կանոններն ու դրանց իրականացման ընթացակարգերը սահմանող հիմնական փաստաթուղթն է: Այս Կանոնադրությամբ է պարտավոր առաջնորդվել ինքնակառավարվող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Ուստի,հոգևոր իշխանության իրականացման վերաբերյալ,ցանկացած հանրային քաղաքականպաշտոն զբաղեցնող անձի հրաման կամ որոշումՀայ Եկեղեցու նվիրապետությանը վերաբերելի լինելչի կարող:

[1]Տե՛ս հղումով՝
https://www.armenianchurch.org/hy/sections/%D4%B5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE/2017-%D5%A9-%D5%AB-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%AE-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%A9%D5%B8%D6%82%D5%B2%D5%A9%D5%A8 :

Համանման հանգամանքներում պետք է հաշվի առնվեն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) ձևավոնած մետեցությունները: Մասնավորապես, պետության և կրոնական համայնքների միջև փոխհարաբերությունների հավասարակշռությունը գնահատելիս՝Դատարանը քաղաքական իշխանությունների կողմից կրոնական համայնքների ներքին վեճերին միջամտելու թույլատրելիությունը հնարավոր է համարել բացառապես **«չեզոք միջամտության»** սահմաններում: Միևնույն ժամանակ Դատարանն այդ սահմանների գերազանցումը սպառնալիք է համարել Կոնվենցիայի 9-րդ հոդվածով ամրագրված իրավունքների նկատմամբ: Դատարանն ընդգծել է նաև, որ պետական կառավարման մարմինները պետք է շրջահայաց լինեն այս առանձնահատուկ նուրբ ոլորտում և «կրոնի ազատության» իրավունքը «միավորումներ կազմելու ազատության» իրավունքի լույսի ներքո մեկնաբանելիս, կրոնական համայնքին պետք է թույլ տան գործել առանց խաթարումների և առանց պետության կամայական միջնորդության[2]:

Այսպիսով, *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նպետության միմյանցից անջատ լինելը ներառում է, պետության կողմից եկեղեցու՝ օրենքին համապատասխանող գործունեությանը և ներքին կյանքին միջամտելու արգելքը:* Նույն կերպ, ***եկեղեցին չի կարող մասնակցել պետական կառավարմանը կամ իրականացնել որևէ պետական ֆունկցիա*** («Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենք 17-րդ հոդված):

Այս համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի իրավասությունները սահմանված են ՀՀ Սահմանադրության152-րդ հոդվածում,որոնց շրջանակը սահմանափակվում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելով, Կառավարության գործունեությունը ղեկավարելով, Կառավարության անդամների աշխատանքը համակարգելով, նրանց հանձնարարականներ տալով և Անվտանգության խորհուրդը գլխավորելով:

Ուստի ***ՀՀ Վարչապետի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոսին գահընկեց անելու և կաթողիկոսական նոր ընտրություններանցկացնելու նպատակով համակարգող խմբի ձևավորումը զուրկ է իրավական հիմքերից և չի կարող համարվել Սահմանադրությամբ նախատեսված պետական պաշտոնատար անձի օրինական գործունեություն:*** Ավելին, այդ խմբի կազմավորումն ու գործունեությունն օրինական համավել չի կարող նույնիսկ այն դեպքում, եթե Նիկոլ Փաշինյանը սահմանափակված չլինի պաշտոնից բխող իրավասություններով և հանդես գա որպես ՀՀ քաղաքացի՝ հասարակության անդամ, քանի որ այդպիսի նախաձեռնության իրավասությունըվերապահված էմիայն Ազգային-եկեղեցական ժողովին, և կարող է իրականացվել բացառապես Եկեղեցու Կանոնադրությամբ սահմանված կարգով:

ՀՀ վարչապետի գրառումներին առնչվող հաջորդ խնդիրը վերաբերում է ՀՀ ղեկավարի խոսույթում օգտագործվող անպարկեշտ բառապաշարին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի մտքի ազատության և իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքները(41-րդ և 42-րդ հոդվածներ): Սակայն այդ երկու իրավունքների իրականացումն օրենքով սահմանափակված ենբոլոր այն դեպքերում, երբ դրանք սպառնալիք են ստեղծում պետական անվտանգության,

[2] Տես՝ Մահմեդական համայնքի գերագույն սուրբ խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի [Supreme Holy Council of the Muslim Community v. Bulgaria] գործում՝ §73, §§76-86, §79, § 80:

հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց պատվի ու բարի համբավի կամ այլ հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ *Մարդու արժանապատվությունն անխախտելի է:* Այս սկզբունքը, որպես ուղենիշ պետք է ընկած լինի Հայաստանի Հանրապետությունումգտնվող յուրաքանչյուր մարդու վարքագծի և գործունեության հիմքում: Ավելին, *ՀՀ Սահմանադրությունը հանրային իշխանության պարտականությունն է համարում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը (3-րդ հոդված):*

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը իրավական մեխանիզմներ է սահմանել անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից պաշտպանելու համար (19-րդ և 1087.1-ին հոդվածներ):

Սակայն, այդպիսի պաշտպանության գլխավոր առանցքը՝*դատարան դիմելու վերաբերյալվիրավորանքի կամ զրպարտության հասցեատիրոջ կամքն է,* առանց որի օրենքը ինքնուրույնաբար որևէ հետևանք չի առաջացնումվիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի համար: Այլ խոսքով, որքան էլ որ ՀՀ Սահմանադրությունը մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է համարում, և հանրային իշխանությանը սահմանափակում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով (3-րդ հոդված), այնուամենայնիվ ***յուրաքանչյուր ոք ինքն է իրավասու որոշելու՝դատական կարգով իրականացնի իր արժանապատվության պաշտպանությունը, թե՞ ոչ:***

Առկա իրավիճակում, հոգևոր կրոնական ու դավանաբանական հարցերի պարզաբանումը դատական քննության առակա դարձնելն, անշուշտ, պատվաբեր չէ ո՛չ եկեղեցական ու պետական առաջնորդների, ո՛չ էլ հայ հասարակության հավատացյալ քրիստոնյաների համար: Միևնույն ժամանակ, ազատ հասանելիություն ունեցող սոցիալական հարթակներում ՀՀ վարչապետի կողմիցօգտագործվողբառապաշարն ու խոսույթըոչ միայն խախտում են պետության ու եկեղեցու փոխհարաբերությունների հավասարակշռությունը, այլ նաև արատավորում են հենց իր՝ պետության կառավարումն իրականացնող հանրային պաշտոնյայի օրինակելի կերպարը:

Այդուհարնդրձ, ***հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են սթափ պահել հանրությանը ծառայելու գիտակցումը, բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս և դրսևորել պաշտոնին վայել վարքագիծ****(«Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 22, 25-րդ հոդվածներ):*

Հայ հասարակության ժամանակակից իրավագիտակցությունն ու հոգևոր զարգացվածությունըպահանջում է, որ օրենքին կամ եկեղեցական կարգերին հակասող յուրաքանչյուր արարք պատշաճ գնահատականի արժանանաբացառապես իրավասու մարմինների կողմից՝ դրանց քննության իրականացման կանոններին ու սկբունքներին համապատասխան:

Ուստի ***իրավական և ժողովրդավարական պետություն հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում կարծիքի արտահայտման ազատությունը չի կարող գերակա լինելպետական անվտանգության, բարոյականության, անձի արժանապատվության, պատվի, բարի համբավի կամ այլ հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ:***

Այսպիսով, հիմք ընդունելովվերոգրյալը հույս ենք հայտնում, որ ՀՀ Վարչապետը և Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտոն զբաղեցնող անձինքկհարգեն ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները, կդադարեցնենհասարակությանը բևեռացնող գործողությունները,կառաջնորդվեն մարդու արժանապատվության անխախտելիության սկզբունքով ևկկատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Հունիս 2025թ.

Կատարող, իրավաբան՝
Նաիրա Ավետիսյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն, Կենտրոնական գրասենյակ (Երևան)